

Ո Ր Բ Ա Ն Ո Ց Ը

Հայրենիքին աւերակ ամենավեհ տըխրութեամբ
 Սըօղուած շէնքն է ահա՛ ուր կը մըտնենք, ո՛վ ընկեր,
 Որտազինուէ՛ հաւատքով, հոն կորիւնները ցեղին
 Վրէժին համար գերագոյն պիտի մեծնան, և իրենց
 Բերունցքներուն մէջ արդէն ունին շանթեր բանտարկած,
 Այս շէնքը պարզ ու վրսեմ ուխտարան մ'է, և զանխու
 Հրաբուխներու արգանդին մէջ իր հիմերը կ'իջնեն,
 Իր յաղթ հիմերը կոանիթ կայծակներու մէջ կոփուած,
 Եւ յրդկուած սուրբրով Նեմեսիսի փառքին մէջ.
 Ոճիրը զայն բարձրացուց ու ոճիրին համար մենք
 Մնոր խորան մը տըւինք պաշտամունքի, և հրեղէն
 Հսկայ ջահեր վառեցինք ատելութեան ու վրէժի.
 Եւ հոն մեր ուժն ապագայ արդէն խառնուող մը բոսոր
 Ազատաշունչ գրոհներու՝ գիշերին մէջ կը ստեղծէ...
 Յեղին հոգին կ'ապրի հոն անպարտելի յաւիտեան,
 Արծիւներու բոյն մ'է ան ուր օձերն ալ չեն մօտեր...
 Եւ Աստուածները գոգցեա համբուրած են դեռատի
 Սա ճակատները հրպարտ որոնց մէջ խոկը ցաւին
 Լոյսին, կեանքին հետ ծընաւ, սա ճակատները պատանի
 Ձոր զաղափարը միայն անմահութեամբ կը դրոշմէ...
 Հոն վրէժն է որ կը կոանուի սերունդներու սրբտին մէջ,
 Ազատութեան և լոյսի փայլակնացայտ մուրճերով,
 Հոն ցեղն է որ կը մեծնայ, Հաւատքն է որ սեղմօրէն
 Ինքզնիքն արժիւն իր խաւար թեւերուն տակ կը պահէ
 Չունեն ուր թոյլէն է բանտուած արեւափառ կապոյտին,
 Հոն Հայրենիքն է, ընկեր, որ անվկանդ ծառացած՝
 Ինչպէս կաղնի մ'հինաւուրց, նոր սաղարթներ կ'արձակէ,
 Հոն աճիւնն է զոհերուն, դիւցազներուն փառայեղ,
 Ուր կը շաղէ Ապագան ըղեղներու խիւսին հետ
 Ազատութեան պայքարին տեսլականներն հրաքանդակ՝
 Հազար հազար աստղերու շլաքումներ վառելով,
 Բարձունքներէ զահավէժ արծուի ձագեր են անոնք
 Որ հոս հրպարտ կը մեծնան, և հոգւոյն մէջ ամենքին
 Թեւաբախում մը կ'անցնի ծիրանեփառ երգերու.
 Մեր հայրենիքը զանոնք արիւնի մէջ մըկրտեց,
 Հերոսներու նահատակ բոսորագոյն արիւնով,
 Եւ մեր զոհերը բոլոր իրենց կուրծքէն ջախջախուած
 Ոնոնց վահան մը տըւին և անոնց բոունցքը գինեց
 Մայրերուն վրէժը արգար՝ ամպրոպներու կայծակով:
 Անոնք օրրոց չունեցան, ոչ ալ օրօր մը քաղցրիկ
 Ծընրադիր մայր մ'աղօթկեր անոնց վերեւ չի հըսկեց,

Առիճ մ'անոնց գլուխներուն տըլաւ իր լանջըն, իրբը բարձ.
Եւ արծիւներն իրենց սե թևերուն տակ պահեցին
Մեր գաւաղները որոնց հոգին՝ հրաբուխ՝ կը նընջէ....
Ուխտի կու գանք, ո՛վ ընկեր, ուխտարանն է վսեմագոյն
Սա շէնքն պարզ ու կերտուած ոսկորներով հերոսի,
Ու դարաւոր փառքերու ածիւն՝ մեր հողը կարմիր,
Ուխտի կու գանք, և արդէն կը զգամ հոգւոյս մէջ տրոփուն՝
Ներշնչումի մը պայծառ արծուեթովիցն երկնասլաց:
Ուխտի կու գանք, ո՛վ ընկեր, մըտնենք, և դու պիտ' առնես
Սըրտիդ մէջ կեանքը հըզօր սերունդներուն ապագայ,
Պիտի աչքերդ վառին արշալոյսի բոցերով,

Եւ արիւնիդ մէջ ըզգաս պայքարին կրակը մաքուր,
Ըզգաս արոփինը սաստիկ հայրենիքի վեհ սըրտին
Որ իր արիւնը ջամբեց իրբե գինի՝ մեր արեան....
Հոս վրէժն է որ կը մեծնայ և բիւրաւոր ջահերու
Հըսկայ հըրդեհ մ'է բռնկեր զազափարին մէջ անոնց
Որոնց սիրտն է խոնարհած, ինչպէս երկինք մ'անսահման,
Սերունդներու մըտքին վրայ, Հոս խաւարն է որ կ'անցնի,
Եւ դրան առջև կը սպասէ կառքը հրաբաշ ձիերով
Արշալոյսի մը որուն ըստեղծիչ ոյժն է հոգին
Դիւցազներու փառապանծ, մեռելներու որ անմահ՝
Դափնիներով պըսակուած՝ ծիրանիներ ըզգեցան:
Եկո՛ւր, ընկեր ուխտաւոր, գիտեմ, խոնջ ես և տըխուր,
Դիտեմ, ոտքերդ են քալած տառապանքի ճամբայէն,
Եւ անոնց հետքն արիւնոտ հոգիիս մէջ կ'երկարի
Մինչև գիշերն հեռաւոր արհաւիրքին ու մահուան:
Եկո՛ւր, կամքին խորանն է զոր կոանիթով քանդակեց
Հոն զազափարը վըճիտ Յաւերթութեան աստղին պէս.
Եւ ծընդողբէ հոգեւին, ազնւապաշտ ո՛վ ընկեր,
Հոս մեհեանն է աւերակ հայրենիքին որուն մենք
Երգեցինք փառքն և տխուր ճակատագիրն ողբացինք
Եւ մեր արցունքն յորդահոս դեռ կը մընայ սառնաշիթ
Մեր ցնարներուն կուրծքին մէջ մարգարտացած փունջերով....
Հոն պիտի մենք պաշտենք ցեղն, իր տառապանքն և հանճարն,
Իր պատմութիւնը ցաւոտ, իր արփազեղ յարութիւնն,
Իր գերեզմանը որուն վերև օրոք մ'է կախեր
Մեր երկինքին ծիրանի արիւնակաթ աստղերէն
Հայ մայրութիւնն իր խարշուած աղիքներով սըրբենի...
Տես կենսաւէտ բողբոջները մեր զրախտին աւերակ,
Մենք անոնցմով պիտ' հիւսենք յաղթանակի պըսակներ,
Եւ ամենքս ալ փառքի օր մ'արտախուրել պիտ' երթանք
Մեր արձանները պղինձէ, մեր արձանները մարմար
Որոնց հոգին պիտ' ըլլան զիւցազնութիւնն ու պարծանքն
Աստեղաբիւր քաջերուն՝ որոնք ինկան զարնուած
Հայրենավրէժ պայքարին խառնուրդներուն մէջ հրեղէն...
Հապօն, ընկեր, ելիր, տես, արդէն բանակ մ'են ըստոյգ

Որբերը մեր պաշտելի, գինուորեն՝ են քաջասիրտ
 Որոնց արիւնը կ'եռայ խոյանքներու կարօտով,
 Որոնց հոգւոյն մէջ, լրսէ՛, մոնչոդ առիւծ մը կ'ապրի...
 Ո՛վ ընկեր, օ՛ն, համբուրէ՛ ծալքերն անոնց դրօշակին,
 Որբուհիներն են հինաժ անոր մետաքսն եռագոյն
 Ուր մայրերուն արցո՛ւնքն է մարգարտացիւր իրբի աստղ,
 Եւ շունչը մեր պապերուն զայն կը բանայ լայնօրէն
 Ազատութեան արեւին ճաճանչներուն ոսկեհուր
 Ելի՛ր, ընկեր, ճամբուն վրայ նժոյգները մեր կը տոփեն,
 Փոնչախրոխտ, անհամբեր դէպի կոխ մեկնելու
 Ու կը խածնեն մոլեգին երասանակներն ոսկի,
 Թամբենք ընդ փոյթ երագոտն երկվարները երաշխ,
 Երթանք գիշերը կ'իջնէ՛ իբրեւ անձրեւ թօնընկէց,
 Խաւարին մէջ պիտ, ըլլանք ձիաւորները փառքին,
 Պիտի շողայ ջահի պէս մեր ճօշին դէմ լուսընկան...
 Արշալոյսին կը հասնինք, ու պէտք է որ այս գիշեր,
 Ընկեր՝, մեր սիրտը վառենք վրէժի ուխտով մահագեղ:
 Ես դրան շեմին վրայ զարկի քընարս իբրեւ փուն վահան
 Ու վարը հոն խարձին մէջ ուր նետեցի կուրծքն անոր
 Օձ մը եկաւ ծլւարիւ անոր սըլտին մէջ կոտորած...
 Ինչ փոյթ, մեկնինք, կը փայլի ձեռքիս մէջ սուրը պողպատ
 Իր զատապաւնը բռունցքիս մէջ կը բանտէ սիրտը վեհ
 Դիւցազունի մը որուն գերեզմանին ուխտեցի
 Աստղ մը՝ ջահել փառքերու մեհանին մէջ՝ իր անուան...
 Ու պընդաբար լայնալիւս աղեղն առած եմ արդէն,
 Դրած եմ կապարճն իմ ուսիս, դէպի կրկէս կը սլանամ
 Գաղափարի նժոյգին բաշին կառչած՝ խրմխլով
 Անոր շունչին մէջ արիւնն Ազատութեան փողփողէջ:
 Ես կը սլանամ, կը սլանամ ու ոստանները համուռ
 Իմ ոտքերուն տակ իրենց նոր աւետիսը կ'առնեն...
 Որբերն ահա՛ կը մեծնան, կաղնիացած է ահա՛
 Անոնց հասակը խրոխտ որ րստուհրով կը ծածկէ
 Հերոսական զոհերուն գերեզմանները համայն:
 Հապօն, ելի՛ր, ա՛լ մեկնինք. հազարաւոր զօղանջներ
 Բարձունքներէն ամպածլար քաղքին վրայ կը նետեն
 Մարտահրաւէրը վրէժի սերունդներէն ըսպասուած...
 Ունձէ՛ նըժոյգդ ամենի, ճանկէ՛ բաշն իր, և սլանանք
 Արշալոյսի կառքին հետ—ես դրան վերեւ կախցի
 Գեղադալար դափնիներն իմ քընարիս դրասանգուած,
 Եւ անոնց մէջ վա՛րդ մը լոկ, սիրոյն ծաղիկն անթառամ,
 Գերթողի սիրտս է ահա՛ որ կ'արիւնի վրիժարոր...:

«Արցախի Դիրքոցներ»

ԱՐՄԵՆ-ԵՐԱՅԵ